ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 40 - L

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ՝ ԻՐԱՎԱՍՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի բնագավառի պետական լիազոր մարմնի ծառայողական տրանսպորտային միջոցների՝ իրավասու ստորաբաժանումում տեխնիկական զննության անցկացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Արփինե Սարգսյան

12.06.2026թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ ներքին գործերի
նախարարի
2026թ. հունիսի 12 -ի № 40-Լ
հրամանի

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ՝ ԻՐԱՎԱՍՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ ՀՀ ՆԳՆ) կառուցվածքային ստորաբաժանումների, ենթակա պետական մարմինների, գրասենյակների և նախարարության ենթակայությանը հանձնված կազմակերպությունների ու հիմնարկների (այսուհետ՝ ՀՀ ՆԳՆ ստորաբաժանումներ) ծառայողական տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության անցկացման հետ կապված հարաբերությունները:

2. ՀՀ ՆԳՆ ստորաբաժանումների ծառայողական տրանսպորտային միջոցների տեխնիկական զննությունն իրականացվում է յուրաքանչյուր տարի՝ այդ նպատակով ձևավորվող հանձնախմբի միջոցով:

3. ՀՀ ՆԳՆ ստորաբաժանումների ծառայողական տրանսպորտային միջոցները տեխնիկական զննության են ենթարկվում «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով նշված պարբերականությամբ:

4. Երևան քաղաքում տեղակայված ՀՀ ՆԳՆ ստորաբաժանումների ծառայողական տրանսպորտային միջոցների տեխնիկական զննությունն անցկացվում է ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության ավտոտնտեսության բաժնի տարածքում, իսկ մարզերում տեղակայված ՀՀ ՆԳՆ ստորաբաժանումների ծառայողական տրանսպորտային միջոցների տեխնիկական զննությունն անցկացվում է տեխնիկական զննության անցկացման համար համապատասխան պայմաններ ունեցող վայրերում:

5. ՀՀ ՆԳՆ ստորաբաժանումների ղեկավարները ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության ավտոտնտեսության բաժնի պետի կողմից գրավոր ծանուցվում են ծառայողական տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության վերաբերյալ (Ձև 1):

6. ՀՀ ՆԳՆ ստորաբաժանումների ղեկավարները պարտավոր են ծառայողական տրանսպորտային միջոցները ներկայացնել տեխնիկական զննության՝ ըստ ծանուցմամբ նշված ժամանակացույցի:

7. Ծառայողական տրանսպորտային միջոցների տեխնիկական զննությունը կատարվում է միայն դրանց նույնականացումից հետո:

8. ՀՀ ՆԳՆ ստորաբաժանումների ծառայողական տրանսպորտային միջոցների տեխնիկական զննությունը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի N 955-Ն որոշման հավելված N 2-ով հաստատված ցանկով՝ տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ստուգման նպատակով:

9. Սույն հավելվածի 8-րդ կետի պահանջներին չհամապատասխանող ծառայողական տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է:

10. Անսարք ծառայողական տրանսպորտային միջոցների կրկնակի տեխնիկական զննությունն անցկացվում է ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության ավտոտնտեսության բաժնի տարածքում:

11. Ծառայողական տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության արդյունքները ձևակերպվում են ծառայողական տրանսպորտային միջոցի տեխնիկական զննության ակտով (Ձև 2): Ակտի երկրորդ օրինակը հանձնվում է ՀՀ ՆԳՆ ստորաբաժանումների ղեկավարներին:

12. Տեխնիկական վիճակի մասին ծառայողական տրանսպորտային միջոցի տեխնիկական զննության քարտում կատարվում է համապատասխան նշում (Ձև 3):

13. Ծառայողական տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության անցկացման ավարտից հետո 15-օրյա ժամկետում ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության ավտոտնտեսության բաժնի պետի կողմից կատարվում է արդյունքների ամփոփում:

Ձև 1

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____

_____

(Ստորաբաժանման անվանում, ղեկավարի պաշտոն, անուն, ազգանուն)

ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության ավտոտնտեսության բաժնի կողմից ՀՀ ներքին գործերի նախարարի_____թ-ի _____-ի _____հրամանի համաձայն՝ ա/թ_____ Ձեր ստորաբաժանումում նախատեսված է անցկացնել ծառայողական տրանսպորտային միջոցների տեխնիկական զննություն:

Առաջարկվում է՝ մինչ այդ ծառայողական տրանսպորտային միջոցը(ները) նախապատրաստել տեխնիկական զննության:

ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության ավտոտնտեսության բաժնի պետ _____

_____

«_____»_____20 թ.

Կ. Տ.

Ծանուցումը ստացա

_____

_____

(Ստորաբաժանման անվանում, ղեկավարի պաշտոն, անուն, ազգանուն)

«_____»_____20 թ.

Ձև 2

ԱԿՏ

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ (ՆԵՐԻ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ

«_____»_____20 թ.

Համաձայն **ՀՀ ներքին գործերի նախարարի** _____ հրամանի՝
(ամսաթիվ, ամիս, տարի, հրամանի համար)

_____
(Ստորաբաժանման անվանում , պաշտոն, անուն, ազգանուն)

_____
(Ստորաբաժանման անվանում, պաշտոն, անուն, ազգանուն)

_____
(Ստորաբաժանման անվանում, պաշտոն, անուն, ազգանուն)

_____
(Ստորաբաժանման անվանում, պաշտոն, անուն, ազգանուն)

տեխնիկական զննության ենթարկեցինք _____
_____ծառայողական տրանսպորտային միջոցը(ները):

Հաշվառված թվով _____ ծառայողական տրանսպորտային միջոցից(ներից) տեխնիկական զննության են ներկայացվել _____ծառայողական տրանսպորտային միջոցը(ները): Տեխնիկական զննությամբ պարզվել է՝

հ/հ	Ծառայողական տ/մ ի մակնիշ	Հաշ. հա մարանիշ	Նույնականացում	Շարժիչ	Արգելակման համակարգ	Ղեկային համակարգ	Արտաքին լուսային սարքեր	Անիվներ և դողեր	Այլ անսարքություններ	Եզրակացություն
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										

3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										
12										
13										
14										

15										
16										
17										
18										
19										
20										
21										
22										
23										
24										
25										
26										

27										
28										
29										
30										
31										
32										
33										
34										
35										
36										
37										
38										

39										
40										
41										
42										
43										
44										
45										
46										
47										

Տեխնիկական զննությամբ համարվել է սարքին _____ միավոր ծառայողական տրանսպորտային միջոց:

Տեխնիկական զննությամբ համարվել է անսարք _____ միավոր ծառայողական տրանսպորտային միջոց:

_____միավոր ծառայողական տրանսպորտային միջոց գտնվում է նորոգման կամ վերջինիս սպասման մեջ, _____ միավոր ծառայողական տրանսպորտային միջոց չի համապատասխանում ճանապարհային երթևկության կանոնների և այլ նորմատիվային ակտերի պահանջներին:

Տեխնիկական զննության չի ներկայացվել_____ միավոր ծառայողական տրանսպորտային միջոց, որից՝

Ակտի մեկ օրինակը ստացա:

Կ.Տ Ստորաբաժանման ղեկավար_____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Տեխնիկական զննություն անցկացնող_____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

_____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

_____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

_____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Ձև 3

ՔԱՐՏ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ

ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության ավտոտնտեսության բաժնի կողմից, համաձայն **ՀՀ ներքին գործերի նախարարի** _____թվականի _____-ի հրամանի, ս/թ_____-ին _____մակնիշի _____հաշվառման համարանիշի ծառայողական տրանսպորտային միջոցը ենթարկվել է տեխնիկական զննության և գտնվում է սարքին վիճակում:

ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության ավտոտնտեսության բաժնի պետ _____

_____

«_____»_____20 թ.